**Արձանագրություն N 2**

***2022 թվականի առողջապահության նախարարության կարիքների համար անհրաժեշտ դեղերի ձեռք բերման նպատակով կազմակերպված «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2022/2/4» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի***

ք. Երևան

«28» «Դեկտեմբեր» 2021թ.
ժամը 14:00

Մասնակցում էին՝

| | |
|---|---|
| Հանձնաժողովի նախագահ | Վ. Հակոբյան |
| Հանձնաժողովի անդամներ | Մ. Հարությունյան, Ն. Դանիելյան |
| Հանձնաժողովի քարտուղար | Հ. Սարգսյան |

***1. Գնման ընթացակարգի հայտերի բացման մասին***

---

***(Վ. Հակոբյան)***

Ընդունել ի գիտություն, որ 06.12.21թ. հրապարակվել է հրավեր էլեկտրոնային աճուրդ համակարգում: Հայտերի ներկայացման վերջնաժամկետը՝ 2021 թվականի դեկտեմբերի 15-ին, ժամը 10:00-ին, իսկ հակադարձ աճուրդի մեկնարկը՝ 2021 թվականի դեկտեմբերի 16-ին ժամը 10:00-ին: 2021 թվականի դեկտեմբերի 17-ին ժամը 11:00-ին գնահատող հանձնաժողովը հրավիրել է նիստ՝ հաղթող մասնակիցների կողմից ներկայացված հայտերը գնահատելու նպատակով:

Հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

| Հ/Հ | Մասնակցի անվանում | Կազմակերպության էլ. հասցե | Կազմակերպության ՀՎՀՀ |
|---|---|---|---|
| 1 | «Արփիմեդ» ՓԲԸ | *info@arpimed.com* | 03519299 |
| 4 | «Ջիարջի» ՍՊԸ | *garg.llc@mail.ru* | *02835324* |

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:***

***2. Տվյալներ՝ բացված յուրաքանչյուր ծրարում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին***

---

***(Վ. Հակոբյան)***

Մասնակիցների կողմից ներկայացված ծրարներում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝3, դեմ՝ 0:***

***3. Տվյալներ՝ ծրարների կազմման և ներկայացման հրավերի պահանջներին համապատասխանության մասին***

---

***(Վ. Հակոբյան)***

Մասնակիցների կողմից ներկայացված ծրարները կազմված են հրավերի պահանջներին համապատասխան: Սակայն գնահատող հանձնաժողովը ընդունեց որոշում «Ջիարջի» ՍՊԸ-ի հայտը ուղարկել շտկման 2-րդ չափաբաժնի մասով և առաջարկել մասնակցին շտկել առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը (տեխնիկական բնութագիրը)՝ մասնավորապես շտկել ֆիրմային անվանումը, ապրանքային նշանը և արտադրողի անվանումը: Սահմանված ժամկետում վերջինիս կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի շտկված տարբերակը ներբեռնվել է էլեկտրոնային աճուրդ համակարգում: «Ջիարջի» ՍՊԸ-ի կողմից շտկված տարբերակում նշվել են մի քանի արտադրողների կողմից արտադրված ապրանքներ տարբեր ֆիրմային անվանումներով և ապրանքային նշաններով, որից գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել է բավարար՝ հրավերի պահանջներին բավարարող միայն երկու արտադրողի կողմից արտադրվող դեղերը, ներկայացվում է ստորև՝

| Չափաբաժնի համարը | Առաջարկվող ապրանքի | | |
|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | ապրանքային նշանը | արտադրողի անվանումը |
| 2 | Զալաստա | Զալաստա | ԿՌԿԱ ԴԴ Նովո-Մեստո |
| | Էգոլանզա | Էգոլանզա | Էգիս ֆարմասյութիքալս |

Ուստի գնահատող հանձնաժողովը կայացրեց որոշում «Ջիարջի» ՍՊԸ-ի հետ 2-րդ չափաբաժնի մասով կնքել պայմանագիր վերոնշյալ աղյուսակում նշված չափանիշներով դեղերի համար:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:***

### 4. Մասնակիցների առաջարկած գների մասին

---

***(Վ. Հակոբյան)***

Մասնակիցների կողմից ներկայացված վերջնական գները 16.12.2021թ.-ին կայացած հակադարձ աճուրդից հետո ներկայացվում են կից ֆայլով (excel):

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:***

### 5. Հայտերի վերաբերյալ հարցումների և պարզաբանումների մասին

---

***(Վ. Հակոբյան)***

Հայտերի վերաբերյալ հարցումներ չեն ներկայացվել:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:***

***6. Առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներ որոշելու մասին***

---

***(Վ. Հակոբյան)***

**Որոշվեց.** «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2022/2/4» ծածակագրով գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներ ճանաչել՝

1. «Արփիմեդ» ՍՊԸ-ն՝ 1-ին և 4-րդ չափաբաժինների մասով,
2. «Ջիարջի» ՍՊԸ-ն՝ 2-րդ չափաբաժնի մասով:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:***

***7. Ընթացակարգի ամփոփման մասին***

---

***(Վ. Հակոբյան)***

Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 18.05.2017թ. թիվ 534-Ն որոշման պահանջները և մասնակիցների կողմից ներկայացված հայտերը՝

**Որոշվեց.**

1. «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2022/2/4» ծածկագրով գնման ընթացակարգը ամփոփել, հաղթողներ ճանաչել և կնքել պայմանագրեր՝
   - «Արփիմեդ» ՍՊԸ-ն՝ 1-ին և 4-րդ չափաբաժինների մասով, 58,916,000 ՀՀ դրամ պայմանագրային գումարով.
   - «Ջիարջի» ՍՊԸ-ն՝ 2-րդ չափաբաժնի մասով, 29,700,000 ՀՀ դրամ պայմանագրային գումարով:
2. Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 18.05.2017թ. թիվ 534-Ն որոշման 10-րդ կետի 2-րդ ենթակետը՝ մերժել «Արփիմեդ» ՍՊԸ-ի հայտը 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով և «Ջիարջի» ՍՊԸ-ի հայտը 3-րդ չափաբաժնի մասով՝ վերջիններիս կողմից ներկայացված գնային առաջարկները նախահաշվային գնից բարձր լինելու պատճառով: Եվ հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 18.05.2017թ. թիվ 534-Ն որոշման 10-րդ կետի 3-րդ ենթակետը՝ «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2022/2/4» ծածկագրով գնման ընթացակարգը հայտարարել չկայացած՝ 3-րդ չափաբաժնի մասով, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա՝ մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկները նախահաշվային գնից բարձր լինելու պատճառով: Միաժամանակ որոշվեց

վերահայտարարել նոր գնման ընթացակարգ վերոգրյալ չկայացած չափաբաժնի համար:

3. Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետը՝ «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2022/2/4» ծածկագրով գնման ընթացակարգի համար անգործության ժամկետ սահմանել 29.12.2021թ.-ից մինչև 07.01.2022թ.-ը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:***

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------------------- Վ. Հակոբյան

Անդամներ՝ ---------------------- Մ. Հարությունյան

---------------------- Ն. Դանիելյան

Քարտուղար՝ ---------------------- Հ. Սարգսյան

2022 թվականի կարիքների համար ձեռք բերվելիք դեղերի միավորի վերջնական գներով

| NN | Դեղի անվանումը | Քանակ | Նախահաշվային | | «Արփիմեդ» ՍՊԸ | | | | «Ջիարդի» ՍՊԸ | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Միավորի գին | Գումար | Արժեք | ԱԱՀ | Գումար | Միավորի գին ԱԱՀ-ով | Արժեք | ԱԱՀ | Գումար | Միավորի գին ԱԱՀ-ով |
| 1 | Լորազեպամ 2մգ | 1,870,000 | 13.80 | 25,806,000.00 | 21,505,000.00 | 4,301,000.00 | 25,806,000.00 | 13.80 | | | 0.00 | 0.00 |
| 2 | Օլանզապին 10մգ | 220,000 | 150.00 | 33,000,000.00 | 25,300,000.00 | 5,060,000.00 | 30,360,000.00 | 138.00 | 24,750,000.00 | 4,950,000.00 | 29,700,000.00 | 135.00 |
| 3 | Կարբամազեպին 200մգ | 2,860,000 | 10.20 | 29,172,000.00 | 26,216,666.67 | 5,243,333.33 | 31,460,000.00 | 11.00 | 143,000,000.00 | 28,600,000.00 | 171,600,000.00 | 60.00 |
| 4 | Կլոզապին- 100մգ | 1,100,000 | 30.10 | 33,110,000.00 | 27,591,666.67 | 5,518,333.33 | 33,110,000.00 | 30.10 | | | 0.00 | 0.00 |